ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
«ԾԻԾԵՌՆԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

ՀՀ Կոտայքի մարզ ք.Չարենցավան
3-րդ թաղ. ,4-րդ փողոց, թիվ 16
Ելից 49 18.08.2021թ.

«ԱՐՏԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Խաչիկ Գրիգորյանին
(ՀՎՀՀ 01007798)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Այգեստան 9 25/1
Էլ. հասցեն՝ edita-jan@mail.ru

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 18.03.2021թ. կնքված «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կողմից մինչև 25.12.2021թ.-ը պետք է մատակարարվեր 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) կգ «Կարագ, զելանդական», որը չի մատակարարվել (սկսած սույն թվականի հունիսի 01-ից):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը 2021 թվականի օգոստոսի 18-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում բացված 16028003236000 հաշվեհամարին վճարել 157250 (մեկ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ (պայմանագրի կատարման ապահովում)՝ որպես տուժանք, և 235875 (երկու հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ (որակավորման ապահովում)՝ որպես տուժանք:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ **Կ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ**